



ՅԱՌԱՋԱԲԱՆ

 Յրկար և բազմավաստակ ուղևորութեան ձեռք զարնողի մը պէս հասաւ վերջապէս Ի՞ազմավէպը իր ութետասներորդ տարւոյն վերջը . և առանց ատեն կորմացընելու յոգնութիւն առնելով, հարկ կը սեպէ իր ընթացքը շարունակել, դիտած նպատակին օր մը առաջ հասնելու վախճանաւ : Ի՞այց ինչպէս ուղևորը Ճանապարհագլուխ մը հասած ատեն, զոնէ վայրկենական նիստ մը կ'ընէ, ըրած ու ընելիք Ճամբուն վրայ միհիթարական աչք մը ձգելով՝ ասանկ ալ Ի՞ազմավէպը իր Ճամբայ ելած օրէն մինչև ցայսօր ըրած ուղւոյն և ընելիքին վրայ մտածելու ատեն, ոչ սակաւ միհիթարութեամբ կը զօրանայ իր ընթացքը առաջ տանելու, տեսնելով որ անօգուտ չէ եղած իր այս ձեռնարկը, և մասամբ մը իր վախճանին հասած կը սեպէ ինքզինքը, զուարճախառն պարապմունք մը և օգտակար ժամալաճառութեան միջոց մը հայթայժելով ուսումնասէր մտաց . վասն զի Ի՞ազմավէպը իր 'ի լոյս ընծայուած օրէն բնաւ ուրիշ դիտումն ու վախճան մը չէ ունեցեր, եթէ ոչ մտաւոր շահաբերութիւն մը ուսումնասէր ազգայնոց, եթէ ըլլայ ընթերցանութեան եռանդը ամենուն սրտին մէջ վառելով, եթէ ըլլայ կարեոր գիտութեանց տարերքը շատին ընտանեցնելով, և եթէ ըլլայ սկըզբնական և մանր գիտելիքներ բանասիրաց առատ մատակարարելով, որով զիտութիւնը առ հասարակ բազմաց ծանօթ ըլլայ, քան սակաւուց մատչելի . և աս մասիս նկատմամբ ով կրնայ ուրանալ որ Ի՞ազմավէպը բաւական օգտակար ծառայութիւն մը չէ ըրած ազգին՝ մինչ իր հետոցը ետևէն եկողներ օրէ օր կը շատնան, և իւրաքանչիւրն իրենց ընթերցողներ կը գտնան . միայն աս վերջի տասը տարուանս մէջ՝ մօտ երեսունի չափ օրագրութիւնք և լրագիրք հրատարակուած են, որոնց կէսը գեռ ցայսօր կը շարունակուին, և յայտնի ապացոյց մը կ'ըլլան մեզի որ ընթերցասիրաց հետ գրողք ալ կը շատնան . և թէ դրամն՝ որ մեր և այլոց պիտոյիցն ու զուարճութեանցը համար եղած է, ազնուականաբար ընթերցանութեան ալ կը նուիրուի, որ բուն իսկ մեր մուաւորական զուարճութիւնն ու պիտոյքն է :

Իսածներնէս յայտնի կ'ըլլայ որ Ի՞ազմավէպը իր ընթացքը դեռ չէ լմբնցուցած, և չուղեր ալ Ճամբան կիսկատար թողլով, իր միտքը դրած վախճանէն հրաժարիլ: Ուերևս ումանց փափաքելի երևնայ նոր կերպարանօք մը տեսնել զԻ՞ազմավէպը: այս փոփոխութիւնս որչափ որ մեզի ալ հաճոյական է, բայց թէ որ արտաքսապէս զգալի չկարենանք ընել, կը յուսանք որ ոչ սակաւ փոփոխութիւններ տեսնեն ընթերցողք տարեկան ընթացքին մէջ: և այս պատճառաւ փոխանակ եռամեայ շրջանին, ասկէ վերջը տարեկան շրջանով կ'ընենք, որով ամէն տարի քիչ կամ շատ փոփոխութիւններ տեսնուին իր էջերուն մէջ: Ի՞ս նկատմամբ Ի՞ազմավիպիս վաստակաւողքը մեծապէս կ'ախորժին, որ բարեսէր ընթերցողք առանձինն գրով ծանուցանեն իրենց փափաքած փոփոխութիւններն, և կամ թէ ինչ տեսակ յօդուածներ աւելի հաճոյական կրնան երևնալ իրենց ախորժանացը: Ո՞եծայոյս ենք որ ընթերցողաց ակնկալութիւնը զուր չհանենք, և իրենց կարեկցութեանը արժանանանք, ինչպէս մինչեւ ցայսօր:

